

Ա.

Վեհապաշտութեանցս Անձնատրուածիւններէն շոր-
սին վրայ Աորագոյն տեղեկութիւններ անոք թերի
1912ին Հոռո՛ գտնուած միջոցիս, այսինքն՝

1. Յովհաննէս Եպս., Պատրիարք Կ. Պոլսոյ,
Խուլ կոչեցեալ.
2. Զաքարիա Երեւանցի, Պատրիարք
Կ. Պոլսոյ.
3. Սարգիս Եպ. Սահէթճի Գասպարեան.
4. Յակովբոս-Մեսրոպ Արքեպ. Բեհնեա
օղլու Արապեան.

Վլխաւորաբար Հաւատոյ Տարածման
Ս. Ժողովոյ գիւանին մէջ գտայ բաւական բաներ:
Սոյն հին Գիւանը հետազօտել թէպէտ ինձ բա-
ցառաբար շնորհուեցաւ ամենայն ընդարձակու-
թեամբ, սակայն հազիւ կրցայ 1622էն (Գիւա-
նին սկիզբն) մինչեւ 1674՝ միայն Ս. Ժողովոյ
նիստերուն արձանագրութիւններու իմ նպա-
տակիս համար կարեւորներն ամբողջ մի առ մի
հետազօտել եւ նշանակել. իսկ ասոնց մէջ յի-
շուած նամակներու (եւ այլն) բնագիրներուն
քննութեան այլ եւս ժամանակ չմնաց. հիւան-
դութիւն մը զիս արգելեց, եւ ստիպուեցայ